«ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԲՀԿ-ի 2021 թ.
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2021 թվականին կազմակերպությունը ֆինանսական աջակցություն է ստացել 36 917 576 դրամի չափով։

Իրավաբանական անձիք՝ 27 348 750 դր.

Ֆիզիկական անձիք՝ 9 568 826 դր.

Ծախս.

Աշխատավարձ՝ ներառյալ հարկեր - 5 168 765 դր.

Կոմունալ և գրասենյակային ծախսեր – 97 700 դր.

Բանկային վճարումներ – 111 242 դր.

Ծրագրային ծախսեր – 32 107 236 դր.

- Երևանի Զարգացման կենտրոն։ Կենտրոն են այցելում սոց. անապահով, ծնողազուրկ, բռնության ենթարկված երեխաները։

Կենտրոնում գործում են պարի, նկարչության, թատերական, տիկնիկագործության, օտար լեզուների՝ անգլերեն և ռուսերեն, անիմացիայի խմբակները։ Կազմակերպվում են նաև մարզման կուրսեր ու դասընթացներ ծնողների համար։ Կազմակերպվել են երեխաների աշխատանքները ներկայացնող ցուցահանդեսներ, բաց դասեր՝ անգլերեն, ռուսերեն, «Աշխարհն իմ շուրջը» առարկաներից։ Բեմականացվել է Ջոնաթան Լիվինգստոնի «Ճայը» կենտրոնի երեխաների մասնակցությամբ։ Կազմակերպվել են ճամբարներ Սևանա լճի ափին, Սպորտային խաղեր, Վիկտորինաներ, այցելություններ «Երևան պարկ», մշակութային կենտրոններ։ Կատարվել է վերանորոգման աշխատանքներ Զարգացման կենտրոնի շենքում։

- Ստեփանավանի Զարգացման կենտրոն։ Կենտրոն են այցելում ք. Ստեփանավանի և Ուռուտ գյուղի սոց. անապահով, ծնողազուրկ, բռնության ենթարկված երեխաները։

Կենտրոնում գործում են պարի, նկարչության, թատերական, շախմատի խմբակները։ Կազմակերպվել են էքսկուրսիաներ Երևանի Կենդանաբանական այգում, Հնագույն ձեռագրերի ինստիտուտ՝ Մատենադարանում։ Կազմակերպվել են սպորտային խաղեր, վիկտորինաներ, ճամբարներ, թատերական ներկայացումներ։

-Արագածավանի Զարգացման կենտրոն։ Կենտրոն այցելում են սոց. անապահով, ծնողազուրկ, բռնության ենթարկված երեխաները։ Կենտրոնում գործում են պարի, նկարչության, թատերական, վոլեյբոլի, թենիսի, ֆուտբոլի խմբակները։ Կազմակերպվել են ճամբարներ, միջոցառուներ, սպորտային խաղեր, թատերական ներկայացումներ, այցելություն Երևան՝ «Մուլտերի աշխարհ» ժամանցային կենտրոն, սրճարան։

- Ճամբարակի Զարգացման կենտրոն։ Կենտրոն այցելում են սոց. անապահով, ծնողազուրկ, բռնության ենթարկված երեխաները։ Կենտրոնում գործում են նկարչության, թատերական, շախմատի խմբակները։ Կազմակերպվել են ճամբարներ, միջոցառուներ, սպորտային խաղեր, թատերական ներկայացումներ։

- Օգնություն սահմանափակ կարողություն ունեցող մարդկանց։ Կազմակերպվել են սիստեմատիկ այցելություններ, տոնական միջոցառումներ, ինչպես նաև էքսկուրսիաներ։

- Ֆինանսական աջակցություն Արցախյան պատերազմի ժամանակ զոհված կամ անհետ կորած զինվորների ընտանիքներին։
- Ամսական նպաստի տրամադրում ծնողազուրկ երեխաներին, սահմանափակ կարողություն ունեցող մարդկանց, որբեվարիներին։
- Օգնություն սոց. անապահով ընտանիքներին։ Տրամադրվել են ֆինանսական և սննդի օգնություն։

- Բազմազավակ ընտանիքին օգնություն՝
  վերանորոգվել է բնակարանը, տրամադրվել է սեզոնային հագուստ, կոշիկ, սնունդ։
- Հումանիտար օգնություն Հոլանդիայի Գլոբալ Էյդ Նեթուորք /Global Aid Network/-ից։ Կազմեկերպությունից ստացել ենք գրասենյակային կահույք, հաշմանդամի սայլակներ և սավաններ։

  Հաշմանդամի սայլակները և սավանները տրվել են սահմանափակ կարողություն ունեցող անձանց և սոց. անապահով ընտանիքներին։ Գրասենյակային կահույքը տրամադրվել է Ստեփանավանի, Ուռուտի, Արագածավանի և Ճամբարակի Զարգացման կենտրոններին։

26.03.2022 թ.